



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա ՆՁԴ ԵՎ ԱՆՎՏԱԼԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
Մասնակից՝ ԲԱԳՐԱՏՅԱՆ ԱՐՄԵՆ
Դեկավար՝ ԹԱԴԵՈՍՅԱՆ ՅԱԿՈԲ
Թեմա՝ Ռազմական տեղագրություն

ՆԵՐԱՃԱԿԱՆ ՄԱՍ

Ռազմական տեղագրությունը գործերում ուսուցանվող զինվորական գիտություն (առարկա) է, որի բաղկացուցիչ մասերից են տեղանքի ուսումնասիրման մեթոդների մշակումը, կողմնորոշումը և դաշտային չափումների անցկացումը ռազմական գործողությունների նախապատրաստման ու անցկացման նպատակով:

Ռազմական տեղագրության հիմնական խնդիրներն են՝

- մարտական գործողությունների վրա տարածքի ազդեցության հաշվառում կատարելու համար տեղանքի մասին տվյալների ուսումնասիրում, դասակարգում և ընդհանրացում,
- մարտական գործողությունները նախապատրաստելու, կազմակերպելու և վարելու համար անհրաժեշտ տեղագրական քարտեզների ու տեղանքին վերաբերող այլ փաստաթղթերի բովանդակության և ձևավորման նկատմամբ զորքերի պահանջները բավարարելու համար տվյալների ուսումնասիրումը, համակարգումն ու ընդհանրացումը,
- մարտական խնդիրների լուծման ժամանակ տեղանքի ուսումնասիրման և կողմնորոշման եղանակների ու միջոցների մշակումը,
- տեղանքում կատարվող չափումների և այլ տեղագրական աշխատանքների կատարման եղանակների մշակումը, որոնք անհրաժեշտ են հրաձգային, ռազմահինժեներական և այլ հարցեր վճռելու համար:

Ջորքերի մարտական գործողությունները նախապատրաստելու և անցկացնելու նպատակով, տեղանքում տարբեր ձևերի չափումները կատարում են հետևյալ նպատակներով՝

- հակառակորդի ուժերի տեղաբաշխումն ու տեղանքը հետազոտելիս,
- մարտագրաֆիկական փաստաթղթեր կազմելիս,
- տեղագրական քարտեզները ճշգրտելու և լրացնելու,
- հրամանատարական և դիտարկման կետերը, կրակադիրքերն ու մարտակարգի մյուս տարրերի տեղադիրքերը որոշելու և դրանք քարտեզներում անցկացնելու,

կրակավարման համար անհրաժեշտ ելակետային սկզբնական տեղագրական տվյալներ (հեռավորություններ, ուղղություններ, վերազանցումներ, նշակետերի կոորդինատներ և այլն) նախապատրաստելու:

Ընդհանրացնելով՝ կարելի է կատարել հետևյալ եզրակացությունը.

ռազմական տեղագրության հիմնական խնդիրը զորքերի մարտական գործողությունների տեղաերկրաբաշխական (տեղագեոդեզիական) ապահովումը և տեղանքի ուսումնասիրման եղանակների ու միջոցների հետազոտությունն է:

Ռազմական տեղագրության կապն այլ գիտությունների հետ

Իր տեխնիկական խնդիրները որոշելու համար ռազմական տեղագրությունն օգտագործում է երկրաբաշխության (գեոդեզիայի), տեղագրության, քարտեզագրության և մյուս տեխնիկական հարակից գիտությունների արդյունքներն ու նվաճումները:

Երկրաբաշխությունն ուսումնասիրում է առանձին կետերի ճշգրիտ տեղը, այլ կերպ ասած, դրա կոորդինատները որոշելու եղանակներն ու ձևերը: Իսկ վերջիններիս նշանակությունն ակնհայտ է ռազմատեղագրական աշխատանքներում:

Տեղագրությունը գիտություն է, որը զբաղվում է երկրի մակերևույթի մանրամասն ուսումնասիրմամբ, երկրաչափորեն և տեղանքի հանույթների ձևերի հետազոտմամբ: Վերջիններիս նպատակը տեղագրական քարտեզների և հատակագծերի ստեղծումն է: Վերջին ժամանակներում օդուժի, տիեզերագնացության, բարձր տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ տեղագրական քարտեզների կազմման հիմնական եղանակը ստերեոտեղագրական հանույթի մեթոդն է:

Քարտեզագրությունը գիտություն է, որն ուսումնասիրում է քարտեզների կազմման տեխնոլոգիական եղանակները, դրանց բովանդակության հետ կապված խնդիրների պարզաբանումը:

Մարտավարությունը մշակում է ստորաբաժանումների, զորամասերի և միավորումների մարտական գործողությունների նախապատրաստման և վարման տեսական ու գործնական հարցերը՝ դրա հետ մեկտեղ մանրամասն ուսումնասիրելով տեղանքի ազդեցությունը մարտի կազմակերպման և վարման գործում: Ելնելով վերոհիշյալից՝ այն ցույց է տալիս մարտական խնդիրներն իրականացնելու տեղանքի արդյունավետ օգտագործման առավել նպատակաուղղված եղանակները:

Ռազմաինժեներական գործը տեղանքն ու դրա հատկությունները դիտարկում է՝ ելնելով մարտական գործողությունների ինժեներական ապահովման խնդիրների տեսանկյունից: Այն մշակում է տեղանքի բնական պայմաններին համապատասխան ինժեներական եղանակներ և չափողական միջոցներ, ինչը թեթևացնում է յուրային զորքերի գործողությունները և ամենուր դժվարացնում հակառակորդի գործողությունները:

Ռազմական աշխարհագրությունը բազմակողմանիորեն ուսումնասիրում է տարբեր երկրների և մարտական գործողությունների թատերաբեմերի պայմաններն ու հնարավորությունները, այդ թվում և տեղանքը: Ուսումնասիրելով երկրի մակերևույթի կառուցվածքը, բնական սահմանները, խոչընդոտները, ջրագրությունը, ճանապարհային ցանցն ու տեղանքի այլ կարևոր օբյեկտները՝ այն որոշում է դրանց ռազմական կարևորության աստիճանն ու դրանց համար որոշում կոնկրետ տվյալներ, որոնք մարտական գործողություններ նախապատրաստելիս և վարելիս անհրաժեշտ են հաշվի առնել այս կամ այն տարածաշրջանում:

Ռազմական տեղագրությունն օգտվում է մարտավարության և մյուս ռազմական գիտություններից, զորքերի մարտական գործողություններից, զորքերի տեղագրապատրաստությունն ու տեղաերկրաբաշխական ապահովումը կազմակերպելիս, տարբերատեսակ զենքերի և մարտական տեխնիկայի վրա տեղանքի ազդեցության մասին տվյալներից: Ռազմական տեղագրության մշակած տվյալներն, իրենց հերթին օգտագործում են ռազմական մյուս գիտություններն ու ճյուղերը՝ որոշելու այն խնդիրները, որոնք առնչվում են տեղանքի ուսումնասիրմանն ու օգտագործմանը:

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍ

Տեղանքը և նրա նշանակությունը մարտում

Ջորքերի մարտական գործողությունները տարվում են տեղանքում կամ սերտ կապված են նրա հետ: Տեղանքի մարտավարական առանձին հատկությունների հմուտ օգտագործումը նպաստում է ստորաբաժանումների առջև դրված մարտական խնդիրների հաջող լուծմանը, այդ իսկ պատճառով տեղանքը հանդիսանում է մարտական իրավիճակի կարևորագույն մասնիկներից մեկը:

Յուրաքանչյուր տեղանքում գործելիս գորքերի մշտական մարտական վարպետության բարձրացումը պահանջում է գիտելիքների հետագա կատարելագործում եւ ունակություններ ռազմական տեղագրությունից:

Տեղանքի ուսումնասիրման եղանակների իմացությունը, դրանով կողմնորոշվելու հմտությունը տարբեր պայմաններում, գիշերը, ցերեկը, սահմանափակ տեսանելիության ժամանակ նպաստում են տեղանքի բարենպաստ հատկությունների ճիշտ օգտագործմանը մարտում հաջողության հասնելու համար, օգնում արագ ու վստահ կողմնորոշվել և պահպանել հանձնարարված շարժման ուղղությանը երթի և մարտի ժամանակ:

Տեղանքը երկրի մակերևույթի որոշակի տեղամաս է, որի վրա անցկացվելու են մարտական գործողություններ:

Երկրի մակերևույթի անհարթությունների ամբողջությունը կոչվում է **տեղանքի ռելիեֆ**, իսկ նրա վրա տեղաբաշխված բոլոր առարկաները, որոնք ստեղծված են մարդու կամ բնության կողմից, կոչվում են **տեղանքի առարկաներ**:

Ռեւելիեֆը և տեղանքի առարկաները տեղանքի հիմնական տեղագրական տարրերն են: Տեղանքի տեղագրական տարրերը որոշում են նրա մարտավարական հատկությունները, քանի որ դրանք ազդում են մարտի կազմակերպման և անցկացման, մարտում մարտական տեխնիկայի օգտագործման, դիտարկման, կրակի վարման, կողմնորոշման եւ քողարկման պայմանների վրա:

Տեղանքի մարտավարական հատկությունները և նրա հիմնական տարատեսակները

Տեղանքի այն հատկությունները, որոնք ազդում են մարտական գործողությունների կատարմանը, զենքի և մարտական տեխնիկայի օգտագործմանը, կոչվում են **տեղանքի մարտավարական հատկություններ**: Դրանք են՝

- տեղանքի անցանելիությունը,
- տեղանքի պաշտպանական հատկությունները,
- տեղանքի քողարկման հատկությունները,
- տեղանքի կողմնորոշման պայմանները,

- տեղանքի դիտարկման պայմանները,
- տեղանքի կրակվարման պայմանները,
- տեղանքի ինժեներական սարքավորման և ջրամատակարարման պայմանները:

Ռելիեֆը և տեղանքի առարկաները որոշակիորեն կարող են թուլացնել միջուկային պայթյունի ազդեցությունը ապահովել ամբողջ անձնակազմի ու տեխնիկայի պաշտպանությանը մասսայական ոչնչացման զեւնքից: Տեղանքի այդ հատկանիշները որոշում են նրա **պաշտպանական հատկությունները:**

Տեղանքի անցանելիությունը տեղանքի այն հատկությունն է, որը նպաստում կամ խոչընդոտում է զորքերի տեղաշարժմանը: Այն առաջին հերթին կախված է ամրածածկ, այսինքն՝ ասֆալտապատ, սալապատված ճանապարհների գոյությունից: Օրինակ՝ անտառաճահճային, լեռնային, անապատային տեղանքում նման ճանապարհները կարևոր նշանակություն ունեն և պատահական չէ, որ զորքերի հիմնական ջանքերը թե հարձակման, և թե պաշտպանության ժամանակ կենտրոնացված են սրանց երկայնքով:

Մարտի ընթացքում զորքերը շարժվում են իրադրության պայմանների թելադրանքով, իսկ ճանապարհներ ամենուր չէ, որ կան: Այդ իսկ պատճառով պետք է հաշվի առնել, թե տանկերը, զրահամեքենաներն ու ռազմական տեխնիկայի մյուս միջոցները շարժման ինչպիսի հնարավորություններ ունեն ճանապարհազուրկ վայրերով ընթանալիս՝ իմանալով, որ այդպիսի շրջանների տեղանքի անցանելիությունը մեծապես կախված է ռելիեֆից, հողագրունտների և բուսածածկի բնույթից, բնական և արհեստական արգելքների, այսինքն՝ ճահիճների, գետերի, լճերի, զանազան շինությունների առկայությունից:

Տեղանքի անցանելիությունը գնահատելիս՝ հրամանատարը միշտ հաշվի է առնում մարտական և այլ տեխնիկայի բնութագրերը՝ քաշը, չափերը, շարժիչի հզորությունը: Ուշադրության կենտրոնում է նաև տարվա եղանակը, քանի որ միևնույն տեղանքն ամռանն ու ձմռանը չի կարող ունենալ միևնույն անցանելիությունը: Բայց տեղանքը փոփոխվում է նաև օրվա ընթացքում՝ կախված եղանակի փոփոխությունից:

Տարբեր ծածկերի ճանապարհներով զորքերի շարասյուներով շարժման միջին արագությունը բերված է աղյուսակ 1.-ում:

Ճանապարհի տեսակը և ծածկը	Ծածկ ունեցող ճանապարհներում շարժման արագությունը (կմ/ժ)			
	Նոր	Վերանորոգված	Վնասված	
			Ճանապարհի մինչև 10%-ը	Ճանապարհի ավելի քան 10%-ը
Ավտոմայրուղիներ և բարելավված խճուղիներ.	50	40-50	20-35	10-20
- ցեմենտ և ասֆալտբետոն,	50	40-45	20-30	10-20
- խիճ և մանրախիճ, կապակցող նյութերով մշակված:				
Խճուղի.	40	30-40	20-30	10-20
- խիճ և մանրախիճ,	35	25-35	15-25	10-20
- գլաքար և մանրաքար:	30	20-30	12-20	5-12
Բարելավված գրունտային ճանապարհ (առանց ծածկույթի)	25	15-25	8-15	5-10
Գրունտային և դաշտային ճանապարհներ:				

Ճանապարհագուրկ տեղանքում՝ կախված լանջերի թեքությունից, չոր և կոշտ գրունտների դեպքում շարժման միջին արագությունները բերված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Շարժման օբյեկտը	Շարժման արագությունը (կմ/ժ) լանջերի թեքության դեպքում (°)			
	3-6	6-10	10-15	15-20
Ստորաբաժանումը հետիոտն կարգով	6-5	5-4	4-3	3-2,5
Ավտոմեքենան բարձր անցանելիությամբ	20-15	15-12	12-8	8-5
Թրթուրավոր քարշակ՝ կցորդիչով	12-10	10-7	7-5	5-3
Տանկ	15-12	12-10	10-6	6-4

Ծանոթություն:

1. Խոնավ հողագրունտների վրա շարժման արագությունը ցածրանում է 1,5-2 անգամ:

2. Հասանելի լանջերի թեքությունը՝ բարձր անցանելիության ավտոմեքենայի համար՝ 20-30°, թրթուրավոր քարշակ կցորդիչի համար՝ 17-30°, տանկի համար՝ 30-35°:

Տեղանքի պաշտպանական հատկությունները այն հատկություններն են, որոնք մեղմացնում են հակառակորդի կողմից օգտագործվող տարբեր զինատեսակների ոչնչացնող ազդակի ուժն ու հեշտացնում զորքերի պաշտպանության կազմակերպման գործը: Սրանք որոշվում են ռելիեֆի, բուսածածկի բնույթով, տեղանքում բնական և արհեստական թաքստոցներով:

Ռելիեֆի խորն ու մասնատված ծալքերում, անտառների մեջ գտնվող գորքերին հաջողվում է ավելի քիչ տուժել հակառակորդի օգտագործած զենքերից:

Տեղանքի պաշտպանական հատկությունները լրիվ օգտագործելու համար հրամանատարներն իրականացնում են նաև այլ միջոցներ, օրինակ՝ գորքերի ապակենտրոնացում, քողարկում, տարածքի ինժեներական սարքավորում:

Տեղանքի պաշտպանական հատկությունների հնուտ օգտագործումը ժամանակակից համագորային մարտի կազմակերպման կարևորագույն պահանջներից մեկն է:

Միջուկային զենքի հարվածող ալիքի վնասակար գործոնի ավելացման աստիճանն անձնակազմի և տեխնիկայի՝ լանջի վրա գտնվելու դեպքում, համեմատած բաց տեղանքի հետ, կարելի է դատել աղյուսակ 3-ում բերված տվյալներից:

Աղյուսակ 3.

Լանջի թեքությունը, °	Հարվածող ալիքի ճնշման փոփոխության գործակիցը	
	Առջևի լանջի վրա	Հակադիր լանջի վրա
10	1,1-1,2	1,0
10-15	1,2-1,4	0,9
15-30	2,0	0,7
45	2,5	0,5

Տեղանքի քողարկման հատկությունները այն հատկություններն են, որոնք թույլ են տալիս հակառակորդից քողարկել գորքերի գտնվելու վայրն ու տեղաշարժը: Այն պայմանավորված է բնական թաքստոցների առկայությամբ, որոնք կարող են ստեղծվել ռելիեֆի ձևերով, բուսականությամբ: Ջորքերի քողարկման լավ պայմաններ կան մասնատված տեղանքում: Ռելիեֆի գոգավոր մասերը, ձորակներն ու հեղեղատները քողարկման համար ստեղծում են նպաստավոր պայմաններ: Քողարկված գորաշարժի և թիկունքի հետ կապն իրականացնելու համար դրանք կարող են լինել հարմար և ծածուկ միջանցքներ:

Անձնակազմի և մարտական տեխնիկայի հնարավոր քողարկումը, կախված անտառի խտությունից, բերված է աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4.

Անտառի տեսակը	Ծառերի միջև եղած հեռավորությունը, մ	Արմատների կծկվածությունը	Քողարկման հնարավորությունը
Խիտ անտառ	Մինչև 6	1-0,5	Օբյեկտները հուսալիորեն թաքցնում են առանց արհեստական քողարկիչների Առավել հուսալիորեն թաքցնելու համար առանձին դեպքերում պահանջվում են արհեստական քողարկիչներ Բավարար քողարկման համար անհրաժեշտ են արհեստական քողարկիչներ
Միջին խտության անտառ	6-10	0,5-0,2	
Նոսրանտառ	10-15	0,2-0,1	

Տեղանքի քողարկման հատկությունները կախված են նաև տարվա սեզոնից և եղանակի վիճակից: Այսպես, ամռանը լայնատերև անտառներն ապահովում են ստորաբաժանումների հուսալի քողարկումը: Ձմռանն այդպիսի տեղանքում ձնածածկույթի ֆոնի վրա մարտական տեխնիկան լավ տեսանելի է:

Տեղանքի քողարկման հատկությունները թույլ են տալիս սեփական օբյեկտները քողարկել հակառակորդի ինչպես տեսանելի դիտարկումից, այնպես էլ զանազան տեխնիկական միջոցներով կատարվող հետախուզությունից: Բացի այդ, քողարկված դիրքերից հակառակորդին կարելի է հասցնել անսպասելի հարված:

Տեղանքի կողմնորոշման պայմանները տեղանքին տալիս են այնպիսի հատկություն, որը նպաստում կամ խոչընդոտում է սեփական տեղադիրքի և շարժման անհրաժեշտ ուղղության որոշմանը: Դա կախված է տվյալ վայրում ռելիեֆի բնորոշ տարրերի և տեղային առարկաների գոյությամբ, որոնք ցայտուն կերպով առանձնանում են նմանատիպ տեղային առարկաներից իրենց ձևով, չափերով ու լուսավորվածությամբ, և հանդիսանում են տեղանքի **կողմնորոշիչներ**: Օրինակ՝ անտառում որևէ ծառ որպես կողմնորոշիչ դիտելն անհնար է, բայց տափաստանային համատարած խոտածածկույթով տեղանքում գտնվող միայնակ ծառը, առանձնանալով ընդհանուր ֆոնի վրա, հանդիսանում է լավ կողմնորոշիչ: Կամ քարաթափվածքներով աչքի ընկնող վայրում դժվար է կողմնորոշվել որևէ քարով, բայց նույնպիսի քարը հարթ և ոչ քարքարոտ տեղանքում կարող է հանդես գալ որպես կողմնորոշիչ: Կողմնորոշվելու նշանակությունը շատ մեծ է: Այն հրամանատարը, որն ունի արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողություն, իր

անձնակազմին և կրակամիջոցներին կարող է առաջադրել ճիշտ խնդիրներ, չի սխալվի նպատականշման ժամանակ, մի խոսքով, կարող է հուսալիորեն ղեկավարել մարտը:

Տեղանքի դիտարկման պայմանները տեղանքի այն հատկությունն է, որը նպաստում է կամ խոչընդոտում հակառակորդի ուժերի մասին տեղեկություններ ստանալուն: Այն առաջին հերթին բնութագրվում է տեղանքի տեսանելիության աստիճանով, տեսադաշտի բաց կամ փակ լինելով: Վերջինս կախված է տեսադաշտի հեռավորությունից, ռելիեֆից, բուսականությունից, բնակավայրերի և մյուս օբյեկտների բնույթից: Տեսանելիությունը կախված է նաև օդերևութաբանական պայմաններից և, առաջին հերթին, օդի խոնավության աստիճանից:

Դիտարկումից ստացած արդյունքները հրամանատարին օգնում են համակողմանիորեն գնահատել իրավիճակն ու կայացնել հիմնավորված որոշում:

Տեղանքի կրակավարման պայմանները թույլ են տալիս կրակը կազմակերպել և վարել առավելագույն խորությամբ: Դրանք կախված են ռելիեֆի, բուսականության առանձնահատկություններից: Բազմաթիվ զինատեսակներ թույլ են տալիս ոչնչացնելու մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող օբյեկտներ: Սակայն տեղանքի պայմանները կարող են խոչընդոտել, խանգարել այդ հնարավորությունների օգտագործումը: Կրակավարման պայմանները որոշելիս հրամանատարը նախևառաջ պարզում է հակառակորդի և սեփական զորքերի տիրապետության տակ գտնվող տեղամասերը, ապա հաշվի առնելով օգտագործվող զինատեսակների հնարավորությունները, գնահատում, թե որքանով են նպաստավոր տեղանքի պայմանները թշնամու դիրքերն իրենց ողջ խորությամբ կրակի տակ առնելու համար:

Տեղանքի ինժեներական սարքավորման և ջրամատակարարման պայմանները: Ժամանակակից տեխնիկան թույլ է տալիս տեղանքի պայմանները համապա-տասխանեցնել մարտավարական պահանջներին, այլ կերպ ասած, բարելավել տեղանքի պաշտպանական և քողարկման, կրակավարման և դիտարկման պայմանները: Տեղանք կա, ուր շատ հեշտ է իրականացնել տարատեսակ ինժեներական աշխատանքներ, կան և այնպիսիք, որոնք դժվար են ենթարկվում մարդու կամքին: Ինժեներական սարքավորման պայմանները կախված են հողագրունտների տեսակից, գրունտային ջրերի մակարդակից, շինանյութերի առկայությունից: Մեծամասամբ հողագրունտների վիճակով է որոշվում շարասյունային ճանապարհների կառուցման, խրամատների և խրամուղիների

փորձան, անձնակազմի և մարտական տեխնիկայի թաքստոցների կառուցման աշխատանքների ծավալները: Եթե գետնաշրերի մակարդակը խորն է, ապա այդտեղ կարելի է կառուցել հուսալի շինություններ: Եթե տվյալ տեղանքում կան շինություններ, ապա դարձյալ հեշտանում են կառուցապատման աշխատանքները (խիճ, ավազ, փայտանյութ, շինաքար):

Տեղանքի մարտավարական դասակարգումը

Մարտավարական առումով տեղանքը ընդունված է դասակարգել ըստ անցանելիության, դիտարկման և քողարկման պայմանների, ինչպես նաև ըստ մասնատվածության աստիճանի:

Ըստ անցանելիության պայմանների տեղանքը կարող է լինել անցանելի (հեշտ անցանելի), դժվարանցանելի և անանցանելի:

Անցանելի տեղանքը գրեթե չի սահմանափակում թրթուրավոր մեքենաների արագությունը, չնայած երբեմն անհրաժեշտ է լինում շրջանցել որոշ արգելքներ: Սովորական անցանելիության անվավոր մեքենաների երթևեկությունը փոքր-ինչ դժվար է: Այսպիսի տեղանքում մարտական մեքենաները կարող են ընթանալ տարբեր դասավորությամբ, այդ թվում նաև շարասյուներով: Անցանելի տեղանքը նպաստում է մոտոհրաձգային և տանկային ստորաբաժանումների ավելի արդյունավետ օգտագործմանը, քանի որ ապահովում է դրանց տեղաշարժի մեծ արագություն:

Դժվարանցանելի տեղանքը մատչելի է թրթուրավոր մեքենաների երթևեկությանը, բայց ավելի փոքր արագությամբ, քան անցանելի տեղանքում: Ջորաշարժի արագությունը սահմանափակ է: Սովորական անցանելիության անվավոր մեքենաների երթևեկությունը գրեթե անհնար է: Նման տեղանքում դժվար է կիրառել ընդլայնված մարտական շարադասությունը: Երթևեկությունը հնարավոր է միայն ճանապարհներով ու հատուկ նախապատրաստված անցուղիներով: Դժվարանցանելի տեղանքը բացասական ազդեցություն է թողնում զորքերի տեղաշարժերի, հարձակման արագության, տեմպի, զորաշաժն իրականացնելիս:

Անանցանելի տեղանքն անմատչելի է ինչպես թրթուրավոր, այնպես էլ անվավոր մեքենաների երթևեկությանը: Սակայն այսպիսի տեղանքը կարելի է բարելավել՝ այդտեղ իրականացնելով մեծածավալ ճանապարհաշինական աշխատանքներ:

Ըստ դիտարկման և քողարկման պայմանների՝ տեղանքը լինում է բաց, կիսաբաց և փակ: Բաց տեղանքը հարթ կամ սակավաբլուր անտառազուրկ տարածք է, որի մինչև 75%-ը հրամանատարական բարձունքներից բոլոր ուղղություններով լավ երևում է: Այդպիսի տեղանքն ունի նաև բացասական հատկություն.

ա) այդ տեղանքը քիչ բարենպաստ է սովորական և միջուկային զենքից պաշտպանվելու համար,

բ) հակառակորդի հետախուզությունից պատսպարվելու համար չկան թաքստոցներ և ապաստարաններ,

գ) զորքերը թշնամուց դժվար է աննկատ կուտակել, անցկացնել քողարկված գորաշարժեր:

Ընդհանրացնելով ասածը՝ կարելի է ասել, որ բաց տեղանքը զգալիորեն բարդացնում է պաշտպանությունը:

Կիսաբաց տեղանքը միջանկյալ է բաց և փակ տեղանքների միջև: Այստեղ տարածքի 20%-ը զբաղեցնում են բնական թաքստոցները: Կիսափակ տեղանքում հրամանատարական բարձունքներից երևում է տարածքի 50%-ը:

Դադարի վիճակում ստորաբաժանումները լիովին ապահովված են բնական քողարկիչներով:

Փակ տեղանքն անտառներով, թփուտներով, այգիներով ծածկված տարածք է՝ հաճախակի հանդիպող բնակավայրերով, լեռնային, բլրավետ կամ հարթավայրային ռելիեֆով: Ընդ որում ռելիեֆի ձևերը տեսադաշտը նույնպես սահմանափակող միավորներ են: Նման տեղանքում բնական քողարկիչները կազմում են մակերեսի 30%-ը և ավելին, իսկ հրամանատարական բարձունքներից երևում է 25%-ից պակաս տարածք:

Փակ տեղանքը մարտավարական առումով ունի մի շարք դրական կողմեր.

ա) այն զորքերին քողարկում է հակառակորդի երկրային և օդային դիտարկումից,

բ) բոլոր մարտերի ժամանակ հեշտացնում է գորամասերի քողարկված տեղաշարժը, դրանց գորաշարժը,

գ) պաշտպանում է միջուկային զենքի ներգործությունից:

Փակ տեղանքի բացասական կողմերն են.

ա) այսպիսի տեղանքում դժվար է կողմնորոշումը, նպատականշումը,

բ) խանգարում է մարտադաշտում զորքերի փոխգործողության կազմակերպումը:

Հեղեղատներով, ձորակներով ու գետերով, լեռներով և այլ բնական արգելքներով մասնատվածության աստիճանից կախված՝ առանձնացնում են տեղանքի հետևյալ տեսակները՝

- թույլ մասնատված,
- միջին մասնատված,
- խիստ մասնատված

Թույլ մասնատված տեղանքն ունի աննշան թվով բնական և արհեստական արգելքներ, իսկ եղածն էլ մարտական տեխնիկական բոլոր ուղղություններով կարող է հաղթահարել: Նման տեղանքում բնական արգելքները զբաղեցնում են տարածքի 10%-ը: Այստեղ ռելիեֆը, որպես կանոն, հարթավայրային է, որոշ դեպքերում՝ բլրոտ: Հնարավոր է բոլոր ուղղություններով մարտական տեխնիկայի զանգվածային կիրառումը:

Թույլ մասնատված տեղանքն ապահովում է լավ տեսանելիություն՝ հատկապես հրամանատարական բարձունքներից: Միաժամանակ այն զուրկ է պաշտպանական հատկություններից:

Միջին չափով մասնատված տեղանքում մակերևույթի 20%-ը զբաղեցնում են բնական արգելքները: Նման տեղանքում որոշ ուղղություններով դժվար է մարտական տեխնիկայի օգտագործումը: Սրանք սովորաբար լավ բնակեցված տարածքներ են: Ռելիեֆը սովորաբար բլրավետ է, հազվադեպ՝ հարթավայրային: Միջին չափով մասնատված տեղանքում համեմատաբար ավելի հեշտ է սովորական և միջուկային զենքից պաշտպանվելը:

Խիստ մասնատված տեղանքն աչքի է ընկնում դժվարանցանելի բնական արգելքների՝ լեռների, հեղեղատների, գետերի, ջրանցքների, ճահիճների մեծ թվով: Այսպիսի արգելքներով զբաղեցրած տարածքը խիստ մասնատված տեղանքում կարող է կազմել ավելի քան 30%: Այստեղ ռազմական տեխնիկայի կիրառումը հնարավոր է միայն առանձին ուղղություններով:

Խիստ մասնատված տեղանքը դժվարացնում է հարձակումը և ուժեղացնում պաշտպանությունը:

Բնական թաքստոցների առկայությունը նպաստում է միջուկային զենքից զորքերի քողարկման և պաշտպանության կազմակերպմանը: Այն պայմաններ է ստեղծում հակառակորդի առջևի գծին աննկատ մոտենալու համար:

Միևնույն ժամանակ այդպիսի տեղանքում դժվար են երկրային և օդային դիտարկումները, կան շատ չերևացող և կրակային անմատչելի տարածքներ,


սահմանափակ են զորքերի արագ զորաշարժերի, զինամթերքի և վառելիքի տեղափոխման հնարավորությունները: Ցածր է մարտական մեքենաների շարժման, հետևաբար հարձակման արագությունը: Խիստ մասնատված տեղանքում մեծ է պահանջվող ինժեներական աշխատանքների ծավալը:

Ռազմական գործողությունների իրականացումը եղանակի տարբեր պայմաններում, օրվա ցանկացած ժամին, տեղանքի բազմազան պայմաններում բարձր պահանջներ է առաջադրում զորքերին տեղանքի ուսումնասիրման, գնահատման և օգտագործման առումով:

Ցամաքային զորքերի բարձր տեխնիկական հագեցվածությանը հատուկ ուշադրություն է պահանջում ռելիեֆի, բնահողի բնութագրի և տեղանքի բուսական ծածկույթի ուսումնասիրման նկատմամբ:

Ռելիեֆի տիպային ձևերն են՝ (Նկ.1)

1. **Լեռը** տեղանքի գմբեթածև կամ կոնածև բարձրություն է,
2. **Լեռնաշղթան** մեկ ուղղությամբ ձգված բարձրություն է: Լեռնաշղթայի երկայնքով ամենաբարձր կետերը միացնող գիծը կոչվում է *ջրբաժան*:
3. **Գոգավորությունը** ասիսեածև իջվածք է: Գոգավորությունը ունի եզրագիծ և հատակ: Հատակը հաճախ կարող է լցված լինել ջրով (լիճ կամ ձահիճ): Փոսը ոչ մեծ գոգավորություն է:
4. **Լեռնահովիտը** մեկ ուղղությամբ ձգված և խորը իջած տեղանք է: Լեռնահովտի ցածր կետերը միացնող գիծը կոչվում է *ջրաթափ*:
5. **Թամբարդը** երկու լեռների գագաթների միջև ընկած ցածրություն է:



Նկ.1 Ռելիեֆի տիպային ձևեր

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կախված ռելիեֆի բնույթից՝ տեղանքը լինում է *հարթավայրային, բլրային և լեռնային*, իսկ կախված հողաբուսական ծածկույթի բնույթից՝ *անտառային, ճահճային և անապատատափաստանային*: Ռելիեֆի և հողաբուսական ծածկույթի համադրումից առաջանում են տեղանքի լեռնաանտառային, անտառաճահճային և այլ տեսակներ:

Հարթավայրային տեղանքը հարթ կամ թույլ բլրապատ տեղամաս է: Բլուրների լանջերի թեքությանը 1-2⁰ -ից ավել չէ: Հարթավայրային տեղանքը կարող է լինել բաց, եթե նրա վրա չկան տեղանքի առարկաներ, կամ փակ, եթե այդտեղ առկա են անտառներ, թփուտներ, բնակավայրեր:

Գետերի, լճերի և ճահիճների մեծ քանակության դեպքում հարթավայրային տեղանքը կտրված, մասնատված տեսք է ստանում:

Բլրոտ տեղանքն ունի բարձրություններ և իջվածքներ, որոնք չեն խոչընդոտում մարտական տեխնիկայի և տրանսպորտի բոլոր տեսակների տեղաշարժերին: Այստեղ գերակշռում են բլուրները, լեռնահովիտները, հազվադեպ ձորակները: Բլուրների լանջերի թեքությունը չի գերազանցում 2–3⁰ -ը:

Լեռնային տեղանքում գերակշռում են լեռները, լեռնաշղթաները, կիրճերը և լեռնահովիտները: Դրանց լանջերը, որպես կանոն, թեք են և ժայռոտ:

Անտառային տեղանքը Երկրի մակերևույթի այնպիսի տեղամաս է, որի կեսից ավելին ծածկված է անտառներով:

Ըստ ձևի անտառները լինում են միաշարք, որոնք չունեն մանրանտառ (թփուտներ), և բազմաշարք, որտեղ ծառերը տնկված են տարբեր ժամանակահատվածներում:

Ըստ սաղարթի խտության ու թավության՝ անտառները լինում են շատ խիտ, խիտ և նոսր: Ըստ տեսակի անտառները բաժանվում են լայնատերև, փշատերև և խառը անտառների:

Ճահճային տեղանքը Երկրի մակերևույթի այնպիսի տեղամաս է, որտեղ կան չափից ավելի խոնավ հողեր: Ճահճային տեղանքը իր հերթին բաժանվում է ճահիճների և ճահճացված հողերի:

Անապատատափաստանային տեղանք են համարվում չոր անապատները, կիսաանապատները և տափաստանները: Ռա խիստ չորային տեղանք է մայրցամաքային կլիմայով: Նրան բնորոշ են լայնատարած, անտառազուրկ, քիչ բնակեցված տարածությունները, ճանապարհազրկությունը, ջրի պակասությունը և հողաբուսական յուրահատուկ պայմանները:

Տեղանքի մարտավարական հատկությունների սեզոնային փոփոխությունները

Միևնույն տեղանքը տարվա տարբեր սեզոններին ունենում է ոչ միևնույն անցանելիությունը, կողմնորոշման, քողարկման, դիտարկման և ինժեներական սարքավորման պայմանները: **Գարնանն ու աշնանը** գրունտի վերին շերտը գերխոնավանում է, կորցնում իր ամրությունը, դառնում կաչուն: Երթևեկությունը դժվար է ոչ միայն ճանապարհներից դուրս, այլև հողային ճանապարհներով: Այս սեզոններին հաճախակի մառախուղների և մեծ անպամածության հետևանքով նվազում է տեսանելիությունը: Ջորաշարժը դժվարացնում են ուժեղ քամիները:

Ձմռանը սառցածածկի և ձնածածկույթի պատճառով նվազում է մարտական մեքենաների շարժման արագությունը: Սառած գրունտի պայմաններում դժվարանում է անրաշինական կառույցների շինարարությունը: Ձնածածկի սպիտակ ֆոնը չի նպաստում քողարկմանը: Ձնածածկ տեղանքում դժվարանում է կողմնորոշումը:

Ձյան 30-40 սմ շերտի դեպքում անվավոր մեքենաների երթևեկությունն արդեն անհնար է: 60-70 սմ ձյան շերտի վրայով շարժվող տանկի արագությունն ամառային պայմանների համեմատ 1,5-2 անգամ ցածր է: Հետիոտն զորքն ի վիճակի է քայլել

20-25 սմ-ից ոչ ավելի հաստությամբ ձնաշերտի վրայով: Միաժամանակ ցածր ջերմաստիճանի տակ սառցակալված գետերը, ջրավազաններն ու ճահիճները դառնում են անցանելի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գ. Ա. Մանուկյան «Ռազմական տեղագրություն» դասագիրք ՀՀ ԶՈՒ ԳՇ ՌԲ, Երևան, 2008:
2. Գ. Ա. Մանուկյան «Ստորաբաժանումների տեղագրական պատրաստություն» ուսումնական ձեռնարկ ՀՀ ԶՈՒ ԳՇ ՌԲ, Երևան, 2009:
3. И.А. Бубнов «Военная топография» Москва 1964
4. Ա.Ի. Իսահակյան « Ռազմական տեղագրության խնդիրների լուծման մեթոդիկա» ՀՀ ՊՆ ՌԱՀ, Երևան, 2016:
5. Куприн А.М. Методика топографической подготовки / А.М. Куприн, А.Н. Коваленко, А.М. Морозов. – М.: Воениздат, 1975